

Էներգետիկայի ոլորտի հարգելի՛ աշխատակիցներ,
ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ:

Ժամանակակից աշխարհն անհնար է պատկերացնել առանց էլեկտրականության, լույսի և ջերմության, որոնք ապահովում են էներգետիկայի բնագավառում աշխատող՝ իրենց գործի նվիրյալ մարդիկ: Այս համատեքստում չեմ կարող չշեշտել Մեծամոր քաղաքի և մեծամորցիների դերը, ովքեր համալրում են ՀԱԷԿ-Ի աշխատակիցների շարքերը: Հիրավի Հայաստանի էներգետիկայի բնագավառում նրանց դերը և կատարած աշխատանքն անզնահատելի է:

Շնորհավորելով ձեր տոնը՝ մաղթում եմ անսպառ էներգիա, առողջություն, ընտանեկան երջանկություն և նոր հաջողություններ ձեր դժվարին ու պատասխանատու գործում: Համոզված եմ, որ ձեր մասնագիտական բարձր կարողությունները հետագայում ևս կներդնեք մեր երկրում անկախ, ինքնաբավ և կայուն էներգետիկ համակարգ ունենալու գործում: